Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 1

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

22 մարտի 2016թ. ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի խորհրդի նիստին մասնակցում էին մարզի խորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Նիստին մասնակցում էր ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմի վարչական հսկողության բաժնի պետ Հովհաննես Օհանյանը:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2015թ. գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ

Վ. Գրիգորյան/

2. Գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի և խնդիրների մասին:

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյան/

3. ՀՀ Սյունիքի մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015թ. տարեկան աշխատանքային պլանի կատարման և 2016թ. անելիքների մասին:

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Է. Մարտիրոսյան/

4. Համայնքներում խմելու ջրի որակի և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների մասին:

/ Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ն. Գևորգյան/

Մարզի խորհրդի նիստը բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ ,,**Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2015թ. գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին**,, զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Գրիգորյանը:

Օրակարգի երկրորդ հարցի՝ ,,**Գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի և խնդիրների մասին**,, զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի

մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյանը:

Օրակարգի երրորդ հարցի՝ **,,ՀՀ Սյունիքի մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015թ. տարեկան աշխատանքային պլանի կատարման և 2016թ. անելիքների մասին,,** զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Է. Մարտիրոսյանը:

Օրակարգի չորրորդ հարցի՝ **,,Համայնքներում խմելու ջրի որակի և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների մասին,,** զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ն. Գևորգյանը:

Օրակարգում ներառված հարցերի շուրջ ելույթներով հանդես եկան Կապանի համայնքապետ Ա. Հայրապետյանը, Գորիսի համայնքապետ Վ. Ադունցը, Ագարակի համայնքապետ Մխիթար Զաքարյանը, Գորայքի գյուղական համայնքի ղեկավար Ա. Առուստամյանը:

Հայտարարություններով հանդես եկան ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Է. Մարտիրոսյանը, քաղաքաշինության վարչության պետ Ռ. Ավետիսյանը, Մեղրիի համայնքապետ Ա. Հովհաննիսյանը:

Մարզի խորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյան

Կատ. Ս. Սահակյան
Հեռ. (0285) 2-63-55